ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2023 թվականի փետրվարի 28-ի, ժամը 14:00-ի նիստի
N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Լեզուների ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու **Լիլիթ Ռազմիկի Հակոբյանի «Իսկ դու գիտե՞ս, որ քո խոսքը քո այցեքարտն է...»** ձեռնարկ-ուղեցույցի հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Զեկուցողը նշեց. հրատարակության ներկայացված ձեռնարկ-ուղեցույցի առարկան ժամանակակից հայերեն խոսքում (անկախ գործառնական ոճից) թույլ տրվող լեզվական (արտասանական, բառակազմական, իմաստային, քերականական, ոճային) մի շարք սխալներ են, որոնց առկայությունը հայերենում, հեղինակի խորին համոզմամբ, պետք է բացառել, քանի որ դրանք կարող են ազգային արժեհամակարգի խաթարման պատճառ դառնալ: Հեղինակը գիտական բարեխղճությամբ ներկայացնում է սխալների դիպուկ, հանգամանալից բացատրություններով ուղղումներ՝ ընթերցողին չխճճելով լեզվական բարդ ու շփոթեցնող կանոններով: Նյութի ամրապնդումը կատարվում է օրինակների և տարաբնույթ առաջադրանքների միջոցով: Ձեռնարկն ունի գործնական բնույթ՝ զերծ տեսական բարդ մտքերից, տերմիններից, արհեստականորեն ստեղծված կառույցներից: Բաղկացած է առաջաբանից, 2 մասից և հավելվածից: Յուրաքանչյուր սխալ կառույց ներկայացնելիս տրվում է հարցը՝ Իսկ դու գիտե՞ս, որ ...՝ դրանով ապահովելով արդյունավետ երկխոսությունը ընթերցողի հետ: Աշխատանքի առանձնացվող արժանիքներից է նաև այն կոչ-հորդորը, որ կարմիր թելի պես ձգվում է ուղեցույցի բոլոր էջերում՝ Իմացի՛ր՝ քո խոսքը քո այցեքարտն է...:

Ձեռնարկ-ուղեցույցի վերաբերյալ ստացվել է 4 դրական կարծիք.

1. Ա.Հ.Աբաջյան՝ Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

2. Ա.Լ.Սարգսյան՝ Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ:

3. Ա.Ռ.Ղարսլյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու:

4. Մ.Ա.Աբգարյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված ձեռնարկ-ուղեցույցը մեր ժամանակներում մեծ պահանջարկ ունեցող ինքնատիպ աշխատանք է՝ պայմանավորված մայրենի լեզուն անաղարտ պահելու անհրաժեշտությամբ: Գրված է գիտահանրամատչելի ոճով: Աշխատանքը լեզվական սխալների, դրանց ճիշտ ձևերի, համապատասխան օրինակների ու առաջադրանքների հաջողված համակցություն է: Օգտակար կարող է լինել ուսանողների, մասնագետների, ինչպես նաև հայոց լեզվի անաղարտությամբ մտահոգվող յուրաքանչյուր մարդու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, լեզուների ամբիոնի, կառավարման ֆակուլտետի խորհրդի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ լեզուների ամբիոնի ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու **Լիլիթ Ռազմիկի Հակոբյանի «Իսկ դու գիտե՞ս, որ քո խոսքը քո այցեքարտն է...»** ձեռնարկ-ուղեցույցը երաշխավորել հրատարակության՝ հեղինակի միջոցներով: Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2023 թ. փետրվարի 28
Երևան